



ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ Կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամէն
ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ Կ. Պոլիս, Ղալաթիա հորատունկեան խան:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարայ:

Համարակցութիւն

Պոլիս, տարեկան

Գաւառները,

Օտար երկիրը,

մէկ մէծիտ:

մէկ քառորդ ոսկի:

վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 15 ՄԱՐՏ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոյն իսկ Գաղտնիքն ալ հրապոյր չունի մեր ազգային երեսփոխան տեսարց համար: Ի զուր դռնիակ նիստերու հմայիչ հրաւերները կը դրկուին. ի զուր կ'ըսուի թէ ինչ որ ամբողջ հայ ազգին համար գաղտնածածուկ պիտի մնայ՝ իրենց պիտի հաղորդուի: Խորհրդաւոր դռնիակ նիստերն իրարու կը յաջորդեն—ու պիտի յաջորդեն—և Խորհրդարանը միշտ թափուր կը մընայ: Գաղտնիքի հրապոյրէն աւելի զօրեղ է Չանձրոյթի երկիւղը: Այդ երկիւղն ո՞րչափ սարսուղ կ'աղդէ. որ մինչեւ ամէնէն աւելի լաւ տրամադրութիւններ ունեցողները կը խրաչին ժողովաստեղին երթալէ: Անցեալ նստին ամէն ջանք ըրի որ ուշ երթամ, և սակայն որչափ ալ ուշ գացի, այսու հանդերձ անհունապէս ճանճրանալու դժնդակ կացութեան մէջ գտնուեցայ. քովս եղած լրագիրները կարդացի լմնցուցի և ատենարան էֆէնտին տակաւին կը խօսէր: Միւս երեսփոխաններն աւելի ողբալի կացութեան մէջ էին. ո՞չ լրագիր ունէին հետերնին, ո՞չ գիրք. եւ ժամը 7էն մինչեւ 10 իրենց աթոռներ

րու վրայ գամուած պիտի մտիկ ընէին Պաշտէնայի դէմ արձակուած նղովքները: Քիչ մը կը մրափէին, քիչ մը դուրս կ'ելլէին, բայց իրենց այնպէս կը թուէր թէ Պէրպէրեան-Գուրգէն խումբն իրենց դանազան յատկութիւններու միացնելով Յատակաւորութիւն, արեւը, մէկ երկու ժամ կ'ստեղծէր յաջորդած էին: Ի՛նչ, իր քրաղմաշարչար եկեղեցւոյ՝ զօրավիզ պաշտպաններուն Աստուած այսքան շնորհ մը կ'ընէ: Տարակոյս չկայ թէ յաջորդ նստին երեսփոխաններու այսքան թիւ ալ չենք ունենար, վասն զի Գուրգէն էֆէնտին բեմէն ազդարարեց թէ «դեռ չա՛տ ըսելիքներ ունի»: Քիչ մը խոհեմութիւն և վիճակին իրական գիտակցութիւն մը՝ պիտի պարտաւորէին Գուրգէն էֆէնտին իր շրջապատէն ազդարարութիւնը շրջիլ:

Եւ երթանք ի՞նչ ընենք հոն. մեր ամէնուս համոզումն է թէ ամէն լաւ միտքեր, ամէն ընտիր փաստեր կարելի է առ առաւելն տառն վայրկեանի մէջ ըսել լրմնցնել, և սակայն «փոքրիկ հօտը» չկըրնար խօսիլ առանց Ագոնցի ճարտասանութեան օրէնքներու որք կը պատուիրեն թէ ամէն ճառ նախ յառաջարան մը պէտք է ունենայ, յետոյ խնդիրը պէտք է պարզուի իր բոլոր ստորարաժանումներովն, ապա վերջարանը: Եթէ յառաջարանի և վերջարանի հարկ չկայ, պէտք է զայնս դնել, Ա-

դոնցին հաւատարիմ՝ բլլալու համար։ Ու յետոյ՝ նիկնրոն և Դեմոսթենէս այսպէս ըրած են․ եւ եթէ չէք հաւատար, կ'ըսեն, կարգացէք ձաշակ ճարտարախօսացի թարգմանութիւնը, որուն հայերէնը թէպէտ ոսկեգարեան չէ, բայց դարձեալ գաղափար մը կուտայ։

Ի՞նչ ընել այս երեսփոխաններուն հետ․ խօսելէ արդիւնէլ կարելի չէ․ իսկ կարճ ու ամփոփ խօսելու ստիպել զիրենք՝ մտքէ իսկ անցնել յիմարութիւն է։ Ուստի երեսփոխաններու ուրիշ միջոց չը մնար, բայց եթէ ժողովարարէն հեռու փախչի։

Մենք կը կարծենք որ երկու միջոց կայ այս չարիքը դարմանելու։ Առաջին միջոցն այն է որ այդ խմբակ, որ տասը տասերկու երեսփոխաններէ բաղկացած է, իր մէջ համաձայնի և մէկին միայն յանձնէ խօսիլն։ Իրենք ամէնքն ալ կը խօսին, բայց խօսող միայն Ստեփան բաշան ունին։ Երբ խումբ մը իր մէջ Ասլանեան Ստեփան բաշայի պէս խօսող մը ունի, լաւագոյն ծառայութիւնը որ կրնայ մատուցանել թէ՛ իր պաշտպանած դատին և թէ՛ միւս խեղճ երեսփոխաններուն, ուրիշ բան չէ բայց եթէ թողուլ Ստեփան բաշան որ խօսի։

Երբ Ստեփան բաշա խօսի, ամէնքս ալ ուշադիր մտիկ կ'ընենք․ նախ սա յատկութիւնն ունի որ պարապ խօսք չընէր, աւելորդ բառ մը չ'արտասանէր, ոչ ալ պակաս բան մը կ'ըսէ։ Ամէն մէկ ըսածը լաւ կը կռէ․ ճայնը համակրելի է․ մեծ փորձառութիւն ունի․ և ամէն մէկ ըսածին մէջ միտք բանի կայ։ Ամենայն ուշադրութեամբ մտիկ կ'ընենք որ ըսածներէն բառ մը չկորսնցնենք․ մանաւանդ սա համոզումն ունինք թէ վարպետութիւն մը կ'ընէ․ պէտք է ուշադիր բլլալ որ զինաթափ չըլլանք։

Երեսփոխանաց ստուար մեծամասնութիւնը միշտ իրեն հակառակորդ ունեցած է Ստեփան բաշան, բայց վերջապէս հաճոյք է այդպիսի հակառակորդ մը ունենալ, և խորհրդարանական աւանդութիւններու ու սովորութիւններու կատարելագոյն համաձայն է։ Այլ կարելի՞ է յուսալ որ այդ խմբակի անդամները կամաւ լռութեան դատապարտուին։ Անմահութեան լուսնասկիւնին փտանդի՛ կ'ենթարկեն։

Միւս միջոցը որ ամէնէն գործնականն է, այս է․ ներքին կանոնադրի մէջ յաջորդ նստին օրէնք մը դնել որ ո՛ր և է երեսփոխան միւսնոյն խնդրոյն մէջ մէկ անգամէն աւելի չխօսի, և ոչ ալ տասը վայրկեանէն աւելի տեւողութիւն ունենայ իր խօսածը։ Երբ կանոնական տասը վայրկեանը լրանայ, ատենապետն անողորբելի կերպով հնչեցնէ զանգակը և ամէն ինչ վերջանայ։ Այս կերպով չորս հինգ երեսփոխանները տասնական վայրկեան խօսելով յիսուն վայրկեան կ'ընէ․ մեր կողմանէ ալ շատ շատ քսան վայրկեան կը բաւէ, և այսպէս մէկուկէս ժամուան մէջ ամէն ինչ կը վերջացնենք։ Երեսփոխաններն ալ սիրով կուգան, զի պարապ խօսքեր մտիկ ընելու չ'պիտի դատապարտուին․ և մէկ տարուան մէջ փոխանակ 10 20 պարապ նստի՛ մէկ կամ երկու արդիւնաւոր նիստով ամէն խնդիր կը տնօրինուի։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՅՍ Է ԵՂԵՐ

Ա.

Կղզիներէն Պոլիս վերադարձող վերջին շոգենաւը ծանրադանդաղ կը յառաջանար, ֆանարաքիի բացէն, իր անիւներուն հաստաբետ տախտակներովը ծեծելով ծովուն կիսալուտակ մակերեսոյթն, ուր մարը մտնելու մօտ արեւը կուգար նոյն հետայն խառնել իր բեկբեկ և շիկորակ ճառագայթները։ Շոգենաւն իր ետեւ կը թողուր լայն ակօս մը, որուն երկու եզրուրաց սպիտակ փրփուրները, տատանելով և որորուելով, արեգական սաստիկ սլայծառութեանը տակ չլացուցիչ երանգներ կը փոխէին, մինչ անկէ անդին, աջքը կտրածին չափ, Մարմարան կը փռուէր հալած կապարի փողփողումներով, յորս հեռուէն հեռու, շոգենաւի մը կամ առագաստանաւի մը ուրուագիծը կուգար անարատ մը յօրինել։

Օգոստոսի տաք և հեղձուցիչ իրիկուն մըն էր, կիրակի իրիկուն մը՝ Մթնոլորտը, երկտրականութեամբ առկցեալ, միահեծան ճնշում մըն էր, անողոք, անդիմադրելի, զոր մարդ ի զուր պիտի փորձէր ի բաց թօթափել։ Նոյն իսկ հող, ծովուն մէջտեղ, ընդհանուր թմրութիւն մը կը տիրէր, ընդարմացում մը, բնութեան մէկ խուլ անհանգստութեանը պէս։

Շոգեհաւուռն մէջ բազմութիւնը այնչափ լցուած էր որ շատեր ոտքի վրայ մնացած էին։ Չորս կողմ, ամառնային ծիծաղիտ արդուգարդեր, պայծառ գոյներով։ Յոգնութիւն մը կար ամէն դէմքերու վրայ, — մեղկութիւնն այդ տաք մթնոլորտին և խոնջէնքն ամառնային երկար օրուան մը։

Յետսակողմի մեծ դահլճին մէջ, ուր ամէն պատուհանները բաց էին, զուարթ բազմութիւն մը գրաւած էր բոլոր նրստարաններն և բազմոցները, ու դահլճին խորը, մեծադիր հայելիին մէջ խառնիխուռն կ'անդարդառնային կանանց ծաղկազարդ գլխարկներն։

Հայելիին ճիշդ քովը, անկեան մէջ, կիսովին ընկողմանած էր մանկամարդ կին մը, որու վրայ կը դառնային յաճախ ուղեւորաց նայուածքները։ Երսուն տարեկանի մօտ կին մըն էր, քաւէ քաւէ շէշ կաթնադոյն շրջազգեստ մը հագած, որուն պարանոցին քառակուսի բացուածքէն՝ միտք կ'երեւար սպիտակ և վարդերանդ, ժանեակներու փրփուրի մը տակ միապաղաղ փայլունով։ Կիսաբաց բոսորած իր չրթունքը մշտադիպ Ժպիտ մը ունէր, որ իր անխալ և կենդանի այտերուն վրայ երկու փոսիկներ կը պատճառէր։ Աչուրները, սեւթոյր լայն թարթիչներու տակ, նուաղիտ ցոլք մը ունէին, որուն մէջ ճերմակը կը կորսուէր այդ աչքը մրադոյն ծիրով շրջանակեալ, ամբողջ ապականութիւն մըն էր, չես գիտեր ինչ հրաւեր մը հրամայական և խուսափուկ միանգամայն, իր նայուածքին մէջ ընկղմելով գոգցես ցոլացուցած բոլոր առարկաները։ Գլխուն վրայ, պէշտ գլխարկը կը բարձրանար յոխորտ, պատերազմիկ և անառակ կեցուածքով, գարնանային ծաղկանց խոտերու և շիւղերու ներդաշնակ խառնուրդ ի մը տակ ծածկուած։ Չախ ձեռքը, — փէն

ձեռնոցով մը կիսովին պատած մինչև յառաջաբազուկը, որուն լեցուն և սպիտակ մկանունքը՝ եւս տեղի աչքի կը դարնէին ձեռնոցին շաղանակագոյն թեւերուն քով, — անընդհատ կը խաղցնէր սնդուսէ հովանոցի մը նրբակերտ գլուխը։ Այդ անկեանը մէջ ընկողմանած, գլուխը տախտակորմին կրթնած, իր ճապուկ և առուգարարձ լանջքին բովանդակ գեղովը, հոն կը մընար ըզձալի և գրգռիչ, արանց աչքերուն մէջ կարդալով իր յառաջ բերած յոյգերուն շուրջ, իր յաղթանակին կատարեալ գիտակցութեամբ։

Իր ճիշդ քովը նստած էր քառասունի մօտ մարդ մը, որ Արեւելի առաջին երեսը կը կարդար, իր ընթերցումէն շատ գոհ անձի մը հետաքրքրութեամբ։ Մերթընդ մերթ կը դառնար իր ընկերուհոյն, քանի մը խօսք կը միմիջէր, յետոյ վերստին կը խորասուզուէր իր ընթերցմանը մէջ, ինքը միայն անտարբեր ու թերեւս ալ անտեղեակ այն ցանկութեան հոսանքուն զոր այդ կինը կ'արտաշնչէր իր մարմինէն։

Մանկամարդ կինը յանկարծ շտկուեցաւ, իր դիրքէն յոգնած թերեւս, հայելիին մէջ անձնավստահ ակնարկ մը նետեց, մատներովը շտկեց շաղանակագոյն մազերու ապստամբ խոպոպ մը որ գլխարկէն դուրս սարդած էր, նայուածքը չորս գլին պոտցուց և կանգ առաւ երկու աչուրներու վրայ որք, ճիշդ դիմացի անկիւնէն իր վրայ յառած էին յամառութեամբ։ Քսանեհինդ տարեկան երիտասարդ մը նստած էր հոն։ Ծաղկատի կնոջ աչքին զարկաւ անմիջապէս նորա վայելուչ արդուգարդը, — կատրցոտ շէշտէ հագուստ մը, բաց բաճկոնակով, ուր փողկապն յաղթանակաւ կը պարզէր իր սոյնտակ և կապոյտ ծաղիկներուն խառնուրդը, փայլուն կիսակոշիկներ՝ որք թոյլ կուտային տեսնել սեւ մետաքսէ գուլպան գունաւոր ծաղիկներով, և քովը, պէշ վերարկունին սնդուսին քով, յարգադոյն ձեռնոցներ անհոգութեամբ նետուած։ Յետոյ նայեցաւ այդ աչուրներուն որք զինքը կը դիտէին միշտ նոյն մոլեգնութեամբ, այդ թուի և խնամով ածիլուած դիմքին կանոնաւոր և առնական գեղեցկութեանը, ու աչուրները ասդին դարձուց։ Բայց իւր

վրայ դդայ միշտ այդ ցանկութեան նայուածքն որ ամէն կողմէ կը պատէր կը պաշարէր զինքը, իր Գեօրգիին մէջ կ'իջնէր, իր Թեւերուն վրայ կը սեւեռէր, իր ուռուցիկ կուրծքին մեղմիկ ելեւէջներուն կը հետեւէր: Դարձեալ նայեցաւ, բայց չեշտակի, իր Թուլցած ջղերուն բոլոր տրփայոյզ կրակը դնելով իր աչուքներուն մէջ, ու այս անգամ՝ երիտասարդն եղաւ որ խոնարհեց իր աչքերը:

Ու մինչեւ կամուրջ, սիրալի մեղքի մը պէս գաղտագողի ու լռին մենամարտ մը սկսաւ այդ կնոջն ու այդ երիտասարդին մէջտեղ, նայուածքներու մենամարտ մը, մանկամարդ կիներ այն անտարբերութեամբ որ հետաքրքիր ուշադրութիւնը կը պարտիկ, երիտասարդը միշտ իր կրտսեր և հետզհետէ աւելի պահանջող աչուքներուն բովանդակ ըզմանքովը, որուն տաքութիւնը կ'զգար նէ իր մարմնոյն վրայ:

Շոգեհաւը կամուրջին մօտեցած էր, և բազմութիւնը կը փութար դուրս ելլել՝ ազմկալի խառնակութեան մը մէջ: Երիտասարդը Թեին վրայ առաւ վերարկուն, և սպասեց մանկամարդ կնոջ ոտքի ելլելուն, որուն ընկերն արդէն ծալած իր Ալեքսէն, գրպանը կը դնէր զայն խնամով: Դահլճին մէջ շատ քիչ մարդ մնացած էր, մանկամարդ կիներն ալ ոտք ելաւ, վերջին անտարբեր նայուածք մըն ալ նետեց հայելիին մէջ, և հետեւեցաւ իր ընկերոջ: Երիտասարդն եւս ոտք ելաւ նոյն հետայն, և հազիւ քայլ մը առած, դիմացի անկիւնը Թաշկինակ մը տեսաւ, փութանակի առաւ զայն, մուսլինէ ափսոսանքով Թաշկինակ մը, և արտորանքով մանկամարդ կնոջ մօտ երթալով,

— Կը ներէք, տիկին, կարծեմ ձեր Թաշկինակն է որ մուցեր էք:

— Ահ, իմն է, չնորհակալ եմ:

Եւ, չորամիտ խնդութեամբ լեցուն ակնարկ մը նետեց երիտասարդին որ հիմակ ճիշդ անոր ետեւէն կը քայլէր, դուրս ելլող բազմութեան մէջ, դիտելով անոր ձիւնաթոյր ծոծրակը, մոածելով մանաւանդ այն մարմնոյն վրայ որուն մէկ մասըն էր այդ պարանոցը, հրաշակերտ մը ինքնին, անյագութեամբ ծծելով զգլխիչ շունչն որ կը խուսափէր անոր երկու

ուսերուն մէջտեղէն:

Կամուրջին վրայ, հազիւ երկու քայլ առած, բարեկամի մը հանդիպեցաւ:

— Բար՛ իրիկուն, Գիրգորիկ, ըսաւ հապտակով, կը ճանչնաս սա կինը որ մեր առջեւէն կ'երթայ:

— Ճերմակներ հագածը. Տիկին Սիմեանն է, քովինն ալ էրիկը, Սիմեան Պողոս էֆէնտին: Ինչո՞ւ հարցուցիր, Միքէլ:

— Շոգեհաւին մէջ դէմն նստեր էր:

— Մինչեւ հիմա տեսած չէի՞ր զինքը, Ամթ է: Մե՛ղք որ Բերա կը նստիս:

— Իրե՞նք ալ Բերա կը նստին:

— Այո. բայց ամառները Մեծ Կղզի կ'երթան. ի՞նչպէս եղեր է որ վար իջեր են այս իրիկուն: Տեսա՞ր, ի՞նչ հրապուրիչ կնիկ է: Երիկը ապուշին մէկն է:

Եւ Միքէլի ականջն ի վար ծռելով, քանի մը խօսք ըրաւ մեղմաձայն, մինչ երիտասարդին աչուքները կը վառէին յուսուլից: Յետոյ, աճապարանօք բաժնուելով իր բարեկամէն, վազելով գնաց դէպի Գարաքէօյի հրապարակին, այն վայրկեանն ուր Տիկին Սիմեան իր ամուսնոյն հետ բաց կառք մը կը նստէր: Կառքը, չորան մը ընելով, իր առջեւէն անցաւ, ու երիտասարդը վերջին անգամ տեսաւ մանկամարդ կինը իր բովանդակ գեղեցկութեանը մէջ, դարձեալ կիսովին ընկողմնած, գլուխը դէպի ձախ հակած և աչուքները միշտ իրենց խորին և հետախոյզ նայուածքով:

Բ

Միքէ Թումանեան, հօրմէ և մօրմէ որբ, իր ամուսնացած քրոջ հետ կ'ապրէր ի Բանկալթի: Իր քեռայրը բաւական ունեւոր խանութպան մ'էր Մեծ Շուկան: Ինքը ծանօթ հայ վաճառատան մը մէջ արկղակալի և գրագրի պաշտօնները կը վարէր, և ամիսը տասներկու ոսկի կ'ստանար: Անկախ դիրքի տէր, ընտանեաց բեռ չունենալով իր վրայ, զուարճութիւնը կը սիրէր և հետամուտ էր անոր: Իր ունեցած վաղաժամ ազատութիւնը և ժամանակէն առաջ իր բոլոր բաղձանքներուն գոհացում տալու դիւրութիւնը՝ դրական մէկը ըրած էին զինքը: Մարմնոյն յափրացումը սակայն՝ չէր խեղդած բնաւ սիրտը, և վարձկան վայելքներն ու դիւրին

տարփանքները երբեք չէին յագեցուցած իր կրքոտ և անձնազոհութեան պատրաստ բնութիւնը։ Տարբեր միջավայրի մը մէջ ու տարբեր պայմաններու տակ, երազուն, խանդավառ, մեղամազձիկ մէկը պիտի ըլլար այս երիտասարդը, որ հիմակ կնոջ մը Դէմ-Բէին կը նայէր ամէնէն առաջ ու կը խնդար սիրոյ վրայ։

Այն կիրակի իրիկունը սակայն, երբ տուն դարձաւ, ու ընթրիքէն յետոյ կանոնական անկողին մտաւ, զգաց որ անօրինակ բան մը կը դառնար իր ներսիդիին։ Իր աչուները, մութին մէջ խոշոր բացուած, կը տեսնէին դեռ սիրուն դուռնի մը, շագանակագոյն խոսկոպիքներով շրջանակեալ, թեթեւ իմն դէպի ձախ հակած, գոգցեալ միշտ ուսի մը կրթնելու բնագդական շարժումով. ու այդ յանկուցիչ դէմքին վրայ, երկու սեւամթոյր աչուներ, որոց մէջ զգացումը կը լողար, եւ որք, իրենց նայուածքին ձգողական զօրութեամբ, զինքը կը հրաւիրէին վայելքի ամէնէն սաստիկ յոյզերուն։ Ահ, իր երազն եղած էր միշտ այդպիսի կնոջ մը հանդիպիլ կեանքին մէջ. իրեն այնպէս կուգար թէ ճիշդ նոյն այդ կինն էր զոր ընդնշմարած էր իր պատանեկութեան ցնորքներուն մէջ, երբ արիւնը կ'սկսէր իր առաջին ուժգնութեամբը ման դալ իր երակներուն մէջ։ Յետոյ իր բարեկամին խօսքերն յիշեց. անմատչելի կուռք մը չէ՛ր ուրեմն այդ կինը։

Հետեւեալ օրը, ու յաջորդ օրերն ալ, Տիկին Սիմեանի պատկերը չեղաւ իր մըտքէն, ու իր պարտիի ու պահանջի լայն գծերուն մէջտեղ, յաճախ կը տեսնէր անոր դրդախիչ ու խռովիչ դէմքը, որ գրիչը ձեռքէն վար թողուլ կուտար։ Հիմակ գիտէր անոր պատմութիւնը, տողին անդին ուղղած ճարտար հարցումներու շնորհիւ։

Սիմեան Պօղոս Էֆէնտին հանրային վարչութեան մը մէջ բարձր պաշտօն մը ունէր։ Կեանքին մէջ դժնդակ սկզբնաւորութիւն մը ունեցած էր, և հազար զրկանքներով ու անվճար հաստատամտութեան հրաշքներով յաջողած էր ձեռք բերել իր արդի դիրքը։ Հինգ տարիէ ի վեր ամուսնացած էր, փեսայանալով ընտանիքի մը,

որ նախկին հարստութեան մը բեկորներովը կը պահէր դեռ իր փայլն ու շուքը ընկերութեան մէջ։ Դուրսը յայտնապէս կը հաւաստէին թէ Սիմեան Էֆէնտին երջանիկ ամուսնութիւն մը չէր կնքած։ Տիկին Սիմեան «չատ խօսուած աղջիկ մըն էր» եղած, և, ամուսնութենէն երկու տարի վերջը, դարձեալ «կը խօսուէր»։ Ծերերը և կիները կը դատապարտէին զինքը. երիտասարդները կ'ըսէին. «Ան Պօղոս Էֆէնտին պէս մարդո՛ւն ալ...»

Ամուսինը, ինք, բան մը չէր զուրցեր, իր հանդարտ և դիւրահաղորդ լայն դէմքին վրայ, անձկութեան ու է նշան մը, ներքին խուլ մտածման մը ու է հետքը չկար։ Երբ սրահի մը մէջ իր կինը կը տեսնէր շրջապատեալ այրերէ, ընդհակառակն դէմքին վրայ գոհունակութիւնը կ'արտափայլէր, կարծես ինքն ալ ճառագայթումն ստանալով այն յաղթանակին զոր իւր կինը կ'ունենար։ Ընդհանրապէս աւելի քան իր իրենց և աւելի քան իր իրենց քահանայութեանը, որ կողորդալիք քահանայութեանը անցած էր սրահներու մէջ։ «Ապուշին մէկը» կ'ըսէին ոմանք. «փիլիսոփայ մարդ» կ'ըսէին ուրիշները։

Ալ այնուհետեւ, Միքէի հաստատուն գաղափարն եղաւ դարձեալ և միշտ տեսնել այդ կինը։ Իր գեղեցիկ և վայելչալիտ իրիտասարդի ներքին յանձնապատանութիւնը՝ կը թելադրէր իրեն թէ Տիկին Սիմեան շատ անտարբեր աչքով չէր նայած իրեն։ Եւ յետոյ, իր սրտին մէկ պէտքն էր այդ հիմակ. այդ կնոջ պատկերը, փոխանակ հետզհետէ նուաղելու, ևս աւելի պայծառ ու կենդանի դոյներով կը հաստատուէր իր մտքին մէջ, իր աչաց առջեւ, ու կը հասկնար վերջապէս թէ քմահաճոյք մը, վաղանցուկ ու անխորթելի բան մը չէր այդ իրեն համար, հապա անդիմադրելի ու աննուաճելի բաղձանք մը, որ կամաց կամաց կը տիրապետէր իր բոլոր մտածմանց։ Մէկ քանի կիրակի մտադրեց Մեծ կղզի երթալ, յետոյ խորհեցաւ թէ ալ դիւղագնացութենէ դառնալու ժամանակը մօտեցած էր, Բերայի Մեծ-Փողոցին մէջ չկրցաւ բնաւ հանդիպիլ նմա, հակառակ իր երկարատեւ շրջագայութեանց, և իրիկուն մը, նոր-

Թատրոնի պէս-...-ի օթեակներէն միոյն մէջ տեսաւ զնա վերջապէս :

Սե ասանքէ շրջապէս մը հաղած էր , սլարանոցն և ուսերը մերկ , ու յարդաբոյն մոտեցնելու ձեռնոցներ կը ծածկէին թեւերը մինչև արմուկը : Լամպարներուն ստասիկ լոյսը կը ցոլար այդ հոլանի մարմնոյն վրայ , տարօրէն իմն աւելցնելով անոր դժերուն կենդանութիւնը , սեւ կերպոսին խաղաղ արտայայտութեանը քով : Իր վէս գլուխը կը բարձրանար ձիւնաթոյր պարանոցին վրայ , միշտ դէպի ձախ հակած քիչ մը . նոյն լուսավառ աչուքներն էին միշտ , հիմակ աւելի ընկմեալ նայուածքով . տոգոյն այսերը թեթեւ իմն բոսորած էին , հիմակ աւելի տաք մոյնքով . նուրբ ռնդունքը կը սարսուային հեշտութեամբ և նուազկոտ ժպիտ մը ի վեր կը հանէր իր քիչ մը հաստ և կարմրորակ շրթունքը : Իր գերազանցութիւնը կ'զգար և կը վայելէր զայն , օթեակին թաշեայ տախտակէն դուրս ծածկ , գոգցես իյադուրդ զինքը դիտող աչքերուն և դիտակներուն : Քովը , ամուսինը նստած խաղը կը գիտէր ուղարկութեամբ , ակներեւ հաճոյք դալով փրանսական օբէրէի ստահակ խօսքերէն և թերասքող ակնարկութիւններէն , ինք տալով գրեթէ միշտ ծափահարութեանց առաջին նշանն ու իր յաւիտենական քահնապետը լեցնելով բոլոր օթեակը :

Միքէի համար , խաղը այլ եւս գոյութիւն չունէր . գետնայարկը նստած էր , Սիմեաններուն օթեակէն երկու կարգ վար , և տեսարանն իրեն համար այդ օթեակին մէջ փոխադրուած , նայուածքը չէր զատեր անկից : Արարուածը վերջացած էր արդէն , և երկտասարդը նախանձով կը գիտէր այն այրերն , որք , միջնարարէն օդուտ քաղելով , եկած էին անոր ականջին մօտ խօսքեր փոփաւ , զուարճալի խօսքեր անշուշտ , որովհետեւ տիկինը ըզգուշաւորութեամբ կը խնդար իր կործանքին ընդոստ ելեւէջներուն մէջ լոյսին ցոլացումները փոփոխակի ստուերարկելով ու պայծառացնելով : Երկտասարդը կ'սկըսէր յուսահատիւ իր կողմը չը պիտի նայէր անդամ մը , երբ երկրորդ արարուածին մէջտեղը Տիկին Սիմեան , գիտակը թողած , սրահին վրայ ընդհանուր նայ-

ուածք մը պտոցուցած տուն , զգաց քան թէ տեսաւ երկու հրուտ աչերն որք իր վրայ յառած էին : Յօնքերը պոստոց , կարճատեսի պաշտելի ձեւ մը առնելով , տեսնելու համար թէ ո'վ էր այդ ժպիտն նայուածքին տէրը , և անշուշտ ճանչցաւ կզդի շոգենաւին երկտասարդը , « Թաշի-նակին » տղան , որովհետեւ կ'ընտան զիմադները թուլցան և մտերմական սիրուն ժպիտ մը ունեցաւ շրթանցը վրայ :

Ուրեմն մոռցուած չէր . այդ էր կարեւորը Միքէի համար : Սիրտն ուրախութեանէ խայտաց , և ա'լ այնուհետեւ ամէնէն կանոնաւոր յաճախորդն եղաւ Նոր Թատրոնի : Երբեմն առիթ կ'ունենար հանդիպելու Տիկին Սիմեանի , որ զնա տեսած տուն , միշտ նոյն մտերմական ժպիտն ունէր իր շրթանց վրայ : Այդ գիշերները , Միքէ , վերջին արարուածը լմնալուն պէս , կ'ապասէր Թատրոնին սանդուղին գլուխը , բազմութեան մէջ ակնկառոյց դիտելով Տիկին Սիմեանի անցնիլը , անոր մօտէն քալելով , մինչև Թատրոնին դուռը , մինչև կառքն , որ կը հափախէր զայն իրմէ , զինքն հոն թողնով անշարժ , կառքին թաւալմանը ուղարկի :

Եւ սկսաւ միջոցներ խորհիլ աւելի մօտէն տեսնելու համար այդ կինը , անոր ներկայանալու , անոր հետ խօսակցելու , անոր տունը ընդունուելու համար , երբ գիպուածը , որ ամէնէն գերադոյն նախախնամութիւնն է , օգնեց իրեն ամէնէն պարզ եղանակաւ :

Գիշեր մը այցելութեան գացած էր իր հեռաւոր ազգականներէն միոյն տունը , ուր տարին հազիւ մէկ երկու անդամ կերթար , նեղուելով այն յարգական դիրքէն զոր պարտաւոր էր պահել այդ հարուստ և բարձր դրոյց տէր ազգականներուն քով , ուր իրեն հասակակից մէկը չունէր , — հետեւ հետեւ եկող հիւրերուն ետեւէ , յանկարծ երեւցաւ Տիկին Սիմեան իր ամուսնոյն հետ : Միքէի սիրտն սկսաւ տրոփել , այնքան ուժգին , որ վախցաւ զի քովինները չ'լսեն : Տիկինը յառաջացաւ , տանտիրուհւոյն ձեռքը սեղմեց սիրալի կերպով , շուրջանակի թուշտուն բարեւ մը տուաւ գլխով , մինչ Միքէ կիսովին կը խոնարհէր , ընդունելով այդ ողջոյնն որուն մէջ ինք ալ իր բաժինն ունէր անշուշտ :

Հինգ վայրկեան յետոյ, տան տիրուհին կը ներկայացնէր գինքը Տիկին Սիմեանի:

— Միւսիւ Միքէ թումանեան, գինքն, ըսաւ:

Եւ դէպի երիտասարդը դառնալով,

— Տիկին Մառի Սիմեան:

Ու հեռացաւ, միւս այցելուներուն քով երթալով:

Տիկինը գլխու թեթեւ չարժումով մը ընդունեց երիտասարդին խոնարհութիւնը, որ, արդէն անոր մօտեցած, քաղաքավարական մէկ քանի սովորական բանաձեւերէ յետոյ, կ'ըսէր:

— Արդէն ասկից առաջ ձեզի ճանչնալու բաղքն ունեցած եմ, տիկին... Մեծ-կղզիի չոգեհաւին մէջ, երկու երեք ամիս առաջ...

— Ահ, այո՛, կը յիշեմ. ձեր դէմքն անծանօթ չէ ինձ:

Իր չրթանցը վրայ խաղացող ժպիտն ի սուտ կը հանէր իր խօսքերը: Երիտասարդը չ'ախքեղու փափկանկատութիւնն ունեցաւ և խօսակցութիւնը շարունակուեցաւ, կցկոտուր և ընդհատ, մինչեւ որ եկան տիկինը հրաւիրեցին պէգիկի Բաբէի մը:

Ժամ մը յետոյ, ինքն ալ տիկնոջ դէմն անցաւ և մեծ գումարով սկսաւ խաղալ: Հետզհետէ կը կորսնցնէր, բայց այդ պարտութիւնն այնպիսի հաճոյք մը կուտար իրեն, որ մինչեւ առաւօտ պատրաստ էր խաղալ, մինչեւ իր վերջին լուծայն, մինչեւ իր պատիւը, մինչեւ իր կեանքը: Երկու ժամ խաղաց, և այդ երկու ժամերը շլացման պէս սահեցան: Մէն մի վայրկեանի, թուղթերը ժովուած տտեն, իր աչուքները կը յառէր Տիկին Սիմեանի դէմքին վրայ, այդ մաղնիսացման մէջ մոռնալով իր տալիք կամ քաշելիք թուղթը:

Այնուհետեւ Միքէ աւելի յաճախ եկաւ իր ազգականներուն տունը, միշտ յուսալով անդ դտնել զեղեցիկ երազի մը պէս տեսնուած ու անհետացած այդ տեսիլքը, մինչեւ որ իրիկուն մը, անոնց խնդրանքին վրայ, յանձն առաւ Սիմեաններուն երթալ ինքն ալ. չէ՞ մի որ արդէն ներկայացած ու տեսնուած էր անոնց հետ, քաջուելու բան մը չիկար:

Սիմեաններուն տունը, տիկինը շնոր-

հակալ եղաւ իր գալստեանը համար, միասին թուղթ խաղացին նորէն, երիտասարդը դարձեալ կորսնցուց, և, մեկնած տտեն, ուրախութենէն սարսուռաց երբ տանտիրուհին վերստին հրաւիրեց գինքն իր տունը յայտնելով թէ ո՛րչափ գոհ մնացած էր իր այցելութենէն:

Այդ օրուրնէ սկսեալ, այդ խորհրդաւոր մոլորակին արրանեակն եղաւ, իր կամքէն գերադոյն զօրութեամբ մը ընդքարշ տարուելով անոր գծած լուսահետ պարոյթին մէջ: Տիկին Սիմեանի ամէն երեկոյթներուն ներկայ էր, ամէն ներկայացման ուր կը գտնուէր նա, ամէն հանդէսի ուր կ'երեւնար: Իրենց մտերմութիւնն հետզհետէ կ'աւելնար, երիտասարդն իր տենդաբորբօք ըզձանքներովը տակաւ առ տակաւ աւելի յանդուգն, կիներ իր քօղարկեալ զգուշաւորութեանը մէջ աւելի խրախուսող: Հիմակ երբ առիթը գտնէր, Միքէ կը զրուցէր անոր ականջն ի վար իր անզուսպ տարփանքը, և նա մտիկ կ'ընէր, իր նայուածքովն արդէն իսկ անձնատուր: Ինչ որ բերնովը չէր կրնար զուրցնել, երիտասարդն իր ձեռաց սեղմումին մէջ կը դնէր, հրաժեշտի պահուն, իր ջղուտ մատներուն մէջ ամրապէս պարփակելով անոր մտուտ և կակուղ ձեռքը, որուն մեղկ տաքութիւնը կը քրքրէր իր ջիղերը: Տիկին Սիմեան թոյլ կուտար, ու երիտասարդն, իր տարիքին անհամբերութեանը մէջ կ'ընդունարէր արդէն իսկ իր իղձերուն պսակումը անդէն նախանձն և յուսահատութիւնը կը պաշարէին գինքր Ման. կամարդ կիներ շատ բարեկամներ ունէր, և երիտասարդը կատաղութեամբ կը դիտէր ականերեւ մտերմութիւնը զոր Տիկին Սիմեան կը տածէր մէկ քանի անձանց հետ: Անառիկ բերդ մը չէր ապաքէն, այլ պաշարեալ շատ պաշտպանողներ ունէր: Դուրսը, իրեն համար կը զուրցէին թէ այժմ Բ... էթլնտիին «հետ էր», քառսունի մօտ բարձրահասակ և վայելուչ պաշտօնատար մը, որ Տիկնոջ երեկոյթներուն ներկայ էր միշտ:

Յուսոյ և նախանձու այս ելեւէջներուն մէջ, երիտասարդին գլխաւոր մտահոգութիւնն իր դրամական վիճակն էր: Դիտէր թէ արդուզարդն ի՞նչ մեծ նշանակութիւն ունի կանանց համար, և իր

գրեթէ ամբողջ ամսականը կուտար Բերայի ամէնէն հուշակաւոր դերձակներուն, ձեռնոցի, փողկապի, կօշիկի, գլխարկի, թատրոն և նուագահանդէս կ'երթար միշտ, և իրիկունները, պէշի կամ պէշի մէջ, միշտ կը կորսնցնէր, առանց հաշուելու, դրամական ճղճիմ հաշիւներէ վեր ցոյց տալով զինքն այդ կնոջ, կերպիւ իւրիք իր վաճառականի գրադրի մը գիրքը մոռցնել տալու մտադրութեամբ, հաճոյքի մը անձնատուր երեւիլ ուզելով քան զոհողութեան մը տակ ընկճուած, զգալով մանաւանդ թէ, իր վիճակին մէջ, տիկնոջ խաղալու հրաւերը մերժելը՝ չկամութիւն մը չպիտի ենթադրուէր այլ դրամի չգոյութիւն։ Իր գրպանը սակայն անշուշտ չէր հասկնար այդքան նուրբ հաշիւներէ, որոց գէժ լոխ կը բողբոջէր իր դատարկութեամբը։ Արդէն սկսած էր ասդին անդին պարտքեր ընել. պահ մը մտածեց իր քեռայրէն փոխ առնուլ, սակայն շուկայի խանութպանին անխուսափելի պատասխանը, «ամսականներդ ի՞նչ կ'ընես կոր», և անոր տալիք նահապետական խրատները, ետ կեցուցին զինքն այս ձեռնարկէն։

Օր մը, գրասենեակը, այս մտատանջութիւններուն մէջ խորասուզուած, յանկարծական գաղտնիքով մը ունեցաւ, եւ յանկարծական կերպիւ գործադրեց զայն, վախճալով որ իր դատողութիւնը չ'արդիւնէ զինքն այդ գործէն։ Վաճառատան սընտուկէն հինգ ոսկի վերցուց, ինքզինքը խաբելով որ ամսոյն վերջը իր ամսականէն տեղը կը դնէ։ Եւ որովհետեւ շատ դժուար է կանգ առնուլ այդ զաւիժարկին վրայ, որուն թաւալացուցիչ պտոյտը կ'ըզգար արդէն իր գլխոյն մէջ, յաջորդ շաբթուն հինգ ոսկի եւս առաւ, յետոյ գարձեալ, միշտ այն մտածումով թէ ժամանակ ունէր տեղէ մը դրամ ձարելու և անոնց տեղը դնելու։

Այդ ժամանակը չունեցաւ երբեք, և օր մը, յանկարծ, իր տէրը սնտուկին հաշիւը ուզեց։ Երիտասարդը կարմրեցաւ, թոթովեց, սնտուկէն երսուն ոսկի պակաս էր, և իր տէրը նոյն իրիկունն իսկ ճամբու դրաւ զինքը։ Ժամանակէ մը ի վեր արդէն գոհ չէր իր դրագրէն. առտունները միշտ ուշ կուգար, քնատ և թոյլ, ու

առջի ջանադրութիւնը չունէր իր գործին մէջ։

Չորս ամսէ ի վեր առաջին անգամ ըլլալով, Միքէ սթափեցաւ, ու չորս ամսէ ի վեր իր վարած անգիտակից կեանքը մտքին առջեւ բերաւ։ Մեքենային ատամներուն տակ դրած էր արդէն իր մէկ թեւն, և զգաց թէ, քիչ քիչ, իր բոլոր մարմինը պիտի թաւալէր այդ ատամներուն տակ և ջախջախուէր։ Իր անկմանը մէջ, իր գահավիթած փոսին խորէն, հեռաւոր աստղի մը պէս տեսաւ պաշտելի դէմք մը որ հիմակ շատ հեռու էր իրմէ. ու, իր հեշտախտութեանը մէջ, ուր զգայարանները միտքն ընդարմացուցած էին, ասպտամբութիւն մը չունեցաւ, բառ մը չարտատանեց այն կնոջ դէմ. հիմակ որոշած էր. Սիմեաններուն տունը չպիտի երթար. այդ կնոջ քով այնչափ փայլուն եղեւնալէ յետոյ, չէր կրնար յանկարծ խղճուկ և համեստ գիրք մը ունենալ։ Պոլիսը պժգալի երեւցաւ իր աչքին։ Մըտքէն չ'անցուց նոր պաշտօն մը գտնել, որուն համար իր անցեալը պիտի պրպտէին. մանաւանդ գիտէր հրապարակը, առջի անգամէն մէկ քանի հարիւր զրուշ ավտոի տային իրեն։ Ծիշդ այդ ատենները դաւառական քաղաքի մը մէջ առեւտրական շահաւոր պաշտօն մը կ'առաջարկէին իրեն Պոլսոյ տան մը կողմանէ. ընդունեց զայն ու անմիջապէս ճամբայ ելաւ, առանց ետին նայելու, վախճալով իր թուրութենէն, քաջ զգալով թէ, եթէ անգամ մը տկարանար, անդառնալի բան մը պիտի ըլլար այդ, դուցէ ի գին իւր կենաց։

Գ

Երկու տարի մնաց դուրսը, համբերութեամբ, հաճոյքով, չ'զգալով ընաւ իր տաժանելի բեռան ծանրութիւնն, իրեն համար, ճամբուն մէջտեղ կայք մը եղաւ այդ երկարատեւ բացակայութիւնը, ու ոչ թէ վերջնական հեռացում մը իր նպատակակէտէն։ Երկու տարի, գիշեր ատեն մտորած ուղեւորին պէս որ հեռուէն ընդնմարած լոյսին ետեւէն կը վազէ յուսակից, ինքն ալ իր աչքին առաջ ունեցաւ յաւիտ ըզճալի կնոջ մը պատկերն, որ իրեն ոյժ կուտար անարգել ճամբան շարունակելու։ Իր պատանեկութեան բոլոր

կրակոտ երազներն արթնցած էին հիմա, և իր երիտասարդի գրգռուած արիւնը աւելի կենդանութիւն ու աւելի տենդ կուտար այդ երազներուն:

Գաւառական այդ քաղքին մէջ, իր բոլոր ըզմանքները կոյս կը մնային եւ աւելի եւս կ'արծարծէին հրավառ: Միակ նպատակ մը ունէր, — դրամ չահիլ, և կը չահէր, իր պաշտօնէն զատ այլ եւ այլ գործեր կատարելով, մասնաւորապէս յանձնակատարութիւն ընելով իր քեռայրին հաշուոյն: Երբոր գրպանը լեւար, Պոլիս՝ պիտի դառնար, և այս անգամ, արդէն իր դժբաղդութեամբն իրաւունքի մը տիրացած, վերստին պիտի սկսէր իր յարաբերութիւնները Տիկին Սիմեանի հետ: Վստահ էր, ի՞նչ պիտի ըլլար այդ կինը: Այս մտածման մէջ, աշուրները կը փակէր բնազդական կերպով և սիրտը կը սեղմուէր իր կրքին սաստկութենէն: «Մառիս, կեանքս» պիտի ըսէր՝ իր կիզանուտ շըրթունքներուն տակ փակելով անոր բերանը, իր աճառուտ բազուկներուն մէջ խեղդելու աստիճան սեղմելով զայն, իր կրքին դերադոյն աստիճանին հասած և արդէն պատրաստ նուաղելու: Այդ վայելքին մէջ ամէն բան պիտի մոռնար, ու նոր կեանք մը պիտի սկսէր իրեն համար, համակ խինդ և երջանկութիւն: Իր բաղձանքները, այս երազատես անյաղութեան մէջ, անօրինակ սաստկութիւն մը կ'առնուին և իր արիւնը կը մտրակէին:

Դ

—Ահ, դժբէք էք, Միքէլ Գիլիստի. ո՞րչափ ատենէ երեւցած չէիք. կարծեմ դուրսն էիք:

—Այո, տիկին, գործերու պատճառաւ դուրս գացած էի: Հագիւ Պոլիս վերադարձած, առաջին պարտաւորութիւնս կը նկատեմ ձե՛զ այցելութիւն տալ:

—Շնորհակալ եմ: Կը փափաքէի միայն որ մեկնած ժամանակնիդ ալ նոյն հոգածութիւնն ունենայիք որպէս հիմակ: Կարելի՞ բան է յանկարծ ելլել երթալ, առանց գէթ լուր մը տալու:

—Իրաւունք ունիք, տիկին: Սակայն մի՛ զարմանաք եթէ ըսեմ որ դիտմամբ ըրի: Զեր առջեւ յանցաւոր գտնուելու պէս հաճելի բան կայ, տիկին:

Սիմեաններու շքեղ սրահին մէջ տեղի կ'ունենար այս խօսակցութիւնը, տանտիրուհւոյն և Միքէլի միջեւ: Բաւական բազմութիւն կար, ոմանք խաղի սեղանին շուրջը հաւաքուած, այլք դաշնամուրին բոլորտիքը:

Երիտասարդին պատասխանին վրայ, մանկամարդ կինը ժպտելով անոր երեսը նայեցաւ: Դէմքը աւելի թխացած էր. այտերը, ներս քաշուած, աւելի կը շեշտէին իր ամբողջ դիմադժութեան ազդու և առնական արտայայտութիւնը. խորն իջած աշուրներուն մէջ, սպառիչ կրակ մը կը վառէր, իր նայուածքին տալով նշանաւոր և տիրապետութեան արտակարգ զօրութիւն մը:

Երիտասարդն ալ իր կողմէ ուշի ուշով քննեց մանկամարդ կինը: Աչքի զարնող փոփոխութիւն մը չէր կրած, բայց իր շարժմանցը, խօսուածքին ու նայուածքին մէջ հիմակ աւելի նուազկոտ բան մը կար, որ զինքը տաք շնչով կենդանացնելու ըզդայնութիւնը կուտար դիմացինին: Առաձեպական գանարէի մը վրայ ընկողմանած, սկսան խօսակցիլ, իրենց շունչն իրարու խառնելով, այս անգամ կինն աւելի համարձակ ու անձնամատոյց, թերեւս այն մտածմամբ թէ ա՛լ պէտք չկար տանջելու երիտասարդը, կարծելով մանաւանդ թէ առջի անգամուն՝ Միքէլ իր ցուրտ և ըզգուշաւոր վարմունքէ՛ն յուսահատելով հեռացած էր:

Առջի կեանքը վերսկսաւ Միքէլի համար, հետզհետէ աւելի բորբոքելով, ցորչափ կը տեսնէր իր նպատակին իրագործման մերձեցումը: Տեսակ մը հիւանդ էր, տենդ ունէր յարածամ, այլ իր գրգռուած շիղերուն օգնութեամբ կը շարունակէր իր կենցաղը:

Գիշեր մըն ալ, երբ Սիմեաններուն տունէն դուրս ելաւ, այնչափ յուզեալ էր որ փողոցին անկիւնը կանգ առաւ, սրտին հեւքը դադրեցնելու համար: Երկու երեք ժամ նորէն խօսակցած էր մանկամարդ կնոջ հետ, բայց ի՞նչ խօսած էր, ի՞նչ խաղացած էր, ի՞նչքան գումար կորսնցուցած էր, ճշգրիտ գաղափար մը չէր կարող տալ: Միայն թէ, խենդի պէս կ'ըսէր ինքնիրեն. «Վաղը ցերեկ տունը պիտի ըլլայ»:

Գիշերը չ'քնացաւ գրեթէ, և մինչեւ հետեւեալ ցերեկ սիրտը տրոխեց չարունակ, իր խօսական և հապճեպ զարկովը կուրծքը պայթեցնելու սաստիճան։ Սիմեաններուն տունէն ներս մտած միջոցին, ծնդերը յայտնապէս կը դողդղային, և սանդուղներէն վեր ելած ատեն, բարամբունքը բռնելու պէտք ունեցաւ։ Յետոյ սրահը մտաւ, մինչ զինքն առաջնորդող սպասուհին, տիկնոջ իմաց տալու երթալէ յետոյ, նորէն վար կ'իջնէր խոհեմութեամբ։ Ու առանց սրահն սպասելու, դիմացի սենեակէն անցնելով, քովի առանձնոցը մտաւ, հոն տեսաւ Տիկին Սիմեանը, «է—այէ երկար քէն!» մը հագած, ու, խօսք մը չ'արտասանած, թեւերը բացաւ ու գրկերուն մէջ առաւ զինքը։

Դուրսը անձրեւը կը տեղար, գարնան յորդառատ անձրեւ մը, և շառագմամբ կը զարնուէր պատուհաններուն, ուր բիւրաւոր անտեսանելի մատներ խօլական նւագ մը կը հնչեցնէին։ Կայն վարագոյրներ՝ կը մեղմէին առանձնոցին լոյսը, ուր փոքրիկ վառարան մը իր եղի տաքութիւնը կը սփռէր։

Իր համբոյրներովը կը ծածկէր մանկամարդ կնոջ կիսախուփ աչուրները, սարսուցող ռեզուները, անոր չրթանցը վրայ ծծելով իր մարմնոյն բոլոր հաճոյքը։ Ետոյ իր թեւերուն մէջ վեր վերցուց զինքը, և երկուքը միասին ինկան բազմոցին վրայ, երկտասարդը արբելու և մոլորուն, Մառի՝ իր մինչեւ ոսկորներուն ծուծն ապականեալ կնոջ բոլոր ցանկութեամբը։

Երբոր ոտքի ելաւ, Միքէ ցնցում մը ունեցաւ։ Խառնաշփոթ բան մը կ'զգար իր ուղեզին մէջ, և ամէն բանէ առաջ այդ տենեակէն դուրս, այդ կնոջ քովէն հեռի երթալու անդիմադրելի պէտք մը։ Շեշտակի նայեցաւ այդ կնոջ, զոր հինգ վայրկեան առաջ իր թեւերուն մէջ հատցնել պիտի ըզձար, դառն ծալք մը արդէն չորթանցը վրայ, մօտեցաւ, անոր ճակտին վրայ ցուրտ համրոյր մը դրաւ, և առանց ետին դառնալու, սանդուղներէն վար վաղեց։

Դուրս ելած ատեն, զարթնում մը ունեցաւ, որ տարօրինակ կերպիւր կը նմանէր անկման։ Յոգնութիւն չէր զգացածը այլ անկէ տուելի ճնշող բան մը, դառն, կըսկծեցուցիչ, որ իր ուղեղը տակն ու վրայ կ'ընէր։ Անձրեւը տեղատարաւ կը տեղար,

ջուրը իր ծոծրակէն ներս կը սահէր՝ սարսուցուցիչ պտոյտ մը ընելով իր մսին վրայ, և ինք հովանոցը չէր բանար։ Ինչեղած էր իրեն։ Ինքն ալ չէր կարող բացատրել։ Բայց չէ՛, այո՛, կ'ըմբռնէր, զինքը յուզող այլազան զգացմանց մէջ, ամէնուն տիրապետող զգացում մը կար, — պժգանքը, պժգանք իր իսկ անձին։ Իր կեանքին վրայ յետադարձ ակնարկ մը նետեց, և առաջին անգամն ըլլալով, զղջման սուր ցաւը իր սիրտը ծակեց։ Այն հաճոյքն, որուն համար իր երկտասարդութիւնը քայքայած էր, իրեններէն բաժնուած, պատիւը կորսուած, առողջութիւնը խանդարած, հիմակ նողկանք կ'ազդէր իրեն։ Երեք տարիէ ի վեր, երեք տարի շարունակ, զինքը կապող շղթան խորտակեց, անսահման վայելքով կոխելով իր բոլոր անձնասիրութիւնը, իր բոլոր փառասիրութիւնը։

Բանկալթիի շիտակ ճամբէն կ'երթար գլխիկոր, ակռայներուն մէջէն մրմռալով մերթ ընդ մերթ. «Այս է եղեր»։ Ասոր համար ուրեմն իր կեանքը փճաղուցեր էր։ Ու բռնեցքը կը դալարէր, իր իսկ անձէն վրէժ լուծելու մոլեգին խելայեղութեամբ։ «Այս է եղեր»։ Ու միտքը կը բերէր իր բոլոր տենդոտ երազները, իր երեւակայութեան բորբոքումները, իր հեշտորոր ցնորքները։ «Այս է եղեր»։ Մէկ մ'ալ չպիտի դառնար այդ կնոջ քով, օ՛հ, չէ՛, բնա՛ւ, չպիտի՛ դառնար բնաւ։ չէ թէ կը վախնար որ նորէն կ'իյնար անդունդին մէջ, այլ ինքզինքը կարող կ'զգար ահռելի բան մը բնելու այդ կնոջ, իր խորտակուած կեանքին համարը վայրագութեամբ պահանջելու անկից։ Այո՛, չպիտի երթար։ Իր բարոյական ոյժին վրայ վստահութիւն ունէր։ Կորովի բնաւորութիւն ունեցած էր միշտ, իր անհումն իսկ ապացոյց էր ադոր։

Այս որոշումն հանդարտեցուց զինքը քիչ մը, ու հիմա սիրտը անհուն խանդաղատանքով մը լցուած, ա՛լ ակռայներուն տակէն չէր մրմռար, հապա վշտալի մեղամալձութեամբ կը մրմնջէր. «Այս է եղեր»։

Ու հիւսիսային սաստկաշունչ քամին իր երեսին կը զարնէր տարափը, ու յայտնի չէր թէ իր այտերն ի վար գլորող ջուրը անձրեւին կաթիլներն էին թէ ոչ իր արցունքը։

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ՕՐԹԱԳԵՂ, 14 մարտ 1890

Ողբացողի պաշտօնը. — Ներսէս Ներսէսեանի դա-
գաղին շուրջը. — Գարձալ գաւաղանի խնդիր. —
Գէորգ Պատրիարք ու գաւաղանի խնդիր. — Սար-
գիս եպիսկոպոս Զաքարեանց ու գաւաղանի խնդիր.
— Խիղճ ու պարտք. — Օրէնքի խանգարում. — Յան-
ջաւորը:

— Տարիէն աւելի է ա՛լ դադաղներու
շուրջը չես դեգերիր, կ'ըսէին ինձ անց-
եալ օր մի քանի բարեկամներ. որոնց հետ
նստած կը խօսակցէինք գրականութեան
վրայ:

— Շիտակն ըսելով կը վախնամ. կը կաս-
կածիմ որ ընթերցողները զիս ալ դատած
ըլլան «մշտական յուզարկաւոր»ներու շար-
քը: Այդ «մշտական յուզարկաւոր»ները
գիտէք: Ամէն գիւղի սրճարաններուն մէջ
կան խումբ մը մարդիկ որք բան դործ
չունին. մինչեւ իրիկուն նարտ կը խաղան.
երբ մեռելի մը զանգակի ձայնը լսեն
նարտը կը գոցեն, տեղերնուն կ'ելլեն, սի-
կառնին վերջին անգամ մը ուժով քաշելէ
յետոյ կը մարեն կը նետեն, վրանին գը-
լուխին կը թոթուեն, համրիչին կ'առ-
նեն և «աւուր պատշաճի» դէմք առած
եկեղեցի կ'երթան ու տխրամած կը հետե-
ւին դադաղին: Ո՛վ որ ալ մեռնի, «մշտա-
կան յուզարկաւոր»ը կը կատարէ իր
այս պարտականութիւնը. և երբեմն ալ կը
պատահի որ գերեզմանատունէն վերա-
դարձին հարցնէ ուրիշ «մշտական յուզար-
կաւոր»ի մը թէ ո՞վ էր մեռնողը: Զիս ալ
սկսած էին ձայնել լրագրութեան մշտա-
կան յուզարկաւորը: «Երբ մահու զանգակի
զօղանջը կը լսես, անմիջապէս հրապարա-
կին վրայ ես» կ'ըսէին ինձ. և այնքան ը-
սին որ տարիէն աւելի է, ստիպուեցայ
ալ մեռելներու վրայ չխօսիլ:

— Ուրեմն հասարակաց կարծիքէն կը
վախնաս:

— Այդ հիւանդութենէն բռնուած չեմ.
բայց կը վախնամ թէ ձանձրոյթ կ'ազդեմ.
և գիտէք թէ հրապարակագրի մը ամէնէն
մեծ վնասը զոր կրնայ պատճառել, ուրիշ
բան չկրնար ըլլալ բայց ձանձրոյթ ազ-
դել: Եւ ճշմարիտ որ այս մէկ տարուան
մէջ բաւական նեղուեցայ մեռելներու
վրայ չգրելով, և նախանձեցայ Պէրպէր-

եանին որ ձանձրոյթ ազդելու երկիւղը
չունի և...

— Ի՞նչպէս ձանձրոյթ ազդելու երկիւ-
ղը չունի, ըսին բարեկամներս միաբերան:

— Անշուշտ. քսան տարիէն աւելի է
ամէն դադաղի վրայ, ամէն հանդէսներու
մէջ կը բացագանչէ, «ո՛վ երկինք», «ո՛վ
Աստուած», «ո՛հ գեղեցիկը», «ո՛հ բա-
րի՛ն», «ո՛հ ճշմարիտը», քսան տարի ամէն
առթիւ անխռով կրկնել միևնոյն հաստա-
տատիւ պարբերութիւններն առանց մըտ-
քէն անցրնելու թէ ժողովուրդը կրնայ
ձանձրանալ, ամէն մարդու դործ չէ: Ի-
րացնէ երանի՛ ասանկներուն որք անխը-
ռով անձնավստահութիւն ունին:

— Կա՛ւ, դուն ալ ունեցիր այդ անձ-
նավստահութիւնը:

— Այդ անձնավստահութիւնը բնական
տուրք է, և ոչ ստացական յատկութիւն:
Այդ գրական դպրոցն համոզուած է որ
գրութեան մը կարեւորութիւնը, ազ-
դած հաճոյքը, ըսուածին, գրուածին
մէջ չէ, այլ ըսողին վրայ է: Մտքերնին
դրած են թէ ինչ որ ալ ընեն, ժողովուր-
դը հրճուանքով և երկիւղածութեամբ
մտիկ կ'ընէ, վասն զի ըսողը Իրենք են:
Դժբաղդաբար այդ համոզումը երբեք չու-
նիմ. այդ բարձրութեան բնաւ պիտի չը-
կրնամ հասնիլ:

Այս չաբաթ իրիկուն էր որ այս խօսա-
կցութիւնը կ'ընէինք, ու երբ ուշ ատեն բաժ-
նուելով ընկերներէս սկսայ քալել դէպի Օր-
թագեւ, իրիկնամօրի մեղմազձութեան մէջ
կը մտածէի թէ ինչո՞ւ վախնանք որ ժո-
ղովուրդը ձանձրանայ մահահոտ գրու-
թիւններէ: Ո՞չ ապաքէն Մահն ալ Գեղեց-
կին մասն է. և գեղարուեստի ամէնէն մեծ
արտադրութիւնները միթէ Տխրութեան
ու Մահու դրոշմով կնքուած չե՞ն: «Տըխ-
րութիւնը Գեղարուեստի անհուն ստեղնա-
շարին ութեակներէն մին է» ըսած են Գե-
ղեցկադէտները:

Այսպէս չէ՞ տնօրինած բնութիւնն ալ
որ մահուան յարմարագոյն եղանակն որո-
շած է դարունը, թախիծն ու խինդն ան-
բաժան պահելով իրարմէ: Ամէն ժամանա-
կէ աւելի զուարթութեան եղանակին դա-
դաղները կը խուժեն գերեզմանատուն:
Գարնան արեւազեղ, կենսաբոյր օդով մըն
էր որ երկուշաբթի առաւօտ Ներսէս Ներ-

սէսեանի մահուան լուրն առինք։ Այդ խեղճ երիտասարդը կեանքի էն լաւագոյն օրերուն մէջ կը մեռնի։ և մարդիկ, բաւական է որ չար չըլլան, կը ցաւին անոնց վրայ որք աշխարհի մէջ լաւ ապրելու ռահմանուած էին ու չեն կրնար կեանքը վայելել։

Այլ միթէ չատ ապրելու համար՝ ծընած էր այդ երիտասարդ, որու նրբենի հասակն ու բալետ դէմքն արդէն մահակիր էին։ Ներելի՞ է հրապուրիչ ըլլաւրանաստեղծօրէն ու միանգամայն ուժեղ, քաջառողջ, սովորական։

Եւ յետոյ, արդեօք Ներսէսի սրտին խորը, սկրններուն մէջ իսկ չկա՞ր կարօտութիւն մը որ կը հալեցնէր զինքը, հիւանդութիւն մը, որու գիտակցութիւնը հաւանօրէն չունէր, բայց և այնպէս իբր գաղտնի վէրք մը մաշեցուց զինքը։ Կարօտութիւն հայրենի երկրի հողին, օդին, ջուրին։ «Այդ հողին վրայ դու մեծցար, այդ օդը դու ծծեցիր, այդ ջուրը դու խմեցիր՝ ու կ'ապրիս քաջառողջ, Գրիգոր էֆէնտի, ըսած է Հայրիկ իր դամբանականին մէջ. զաւակներդ զրկեցիր անոնցմէ ու կուլաս անոնց վրայ։»

Երկրի՞ կարօտ։ Երբ շուրջներս կը տեսնենք հազարաւոր հայ տղաներու մարած ճրագներն, ապշած կը հարցնենք, «ինչո՞ւ այս բնաջինջ կորուստը։ — Փաշառողջ էին, դիմացկուն, ուժեղ այն հայերն որք հոս գաղթեցին, և սակայն ինչո՞ւ արտադրած են հալած, մաշած սերունդ մը որ տան դուռները կը փակէ։»

Ինչո՞ւ։ — Զի հայրենի երկրի կարօտը զաւակներուն ժառանգութիւն թողած են իրենց արիւնի հետ։

Ինչպէս հսկայաբերձ ծառերն, որք զրկուելով կլիմայէն, որուն ներքեւ ուռճացած էին, ուրիշ կլիմայներու ներքեւ կը փճանան, կ'ըլլան արուգ ծառատունկեր, — այսպէս ալ մեր սերունդները զրկուած հայրենի հողէն, օդէն, ջուրէն, վտիտ տունկեր կը դառնան ու կը խամրին։ Բնութիւնը, օրէնսդիր իմաստուն, նախապէս սահմանած է պատուհասն անոնց որք կը թողուն իրենց հայրերու երկիրն ու կը գաղթեն։ — Փճացում։ — Գէթ հայոց համար։

Բայց երբ գաղթականութեան մէջ կը տեսնենք առոյգ սերունդներու մարմնական հիւծումը, չէ՞նք կրնար արդեօք միտքն ալ ենթարկել տարրալուծական քննութեան և աղբային յատկանիշներու հոգեբանութիւնն ի վեր հանել։ Պոլիս գաղթող հայերու մտային կազմակերպութեան իբր լաւագոյն նմուշը կրնանք ուսումնասիրել և Ներսէս Ներսէսեանի միտքը։ Օտարական մը երբ տեսակցէր այդ երիտասարդին հետ, չէր կրնար մտքէն անցնել թէ գիւղացիի մը անմիջական թռն ու զաւակն է, ա'յնքան նրբամիտ, ա'յնքան բազմէնէն էր։ Ուրիշ ժողովուրդներու մէջ գիւղացիները պէտք է որ մի քանի սերունդ հետզհետէ կրթուին, աստիճանաբար զարգանան, որպէս զի ընդունակ ըլլան արտադրել Ներսէսի նման բարակցած քաղաքակրթեալներ։ Մեր մէջ հօրմէն ի զաւակը փոխանցումն յանկարծական է, անակնկալ է։

Այնուազգի սերունդներու զաւակներն արդեօք մեր գիւղացիներէ շատերը, որք ժամանակին զարհուրելի պատահարներու բերմամբ հողին մէջ որոնած են իրենց փրկութեան թաքստարանն. ու երբ օր մը գիւղուածը կը բանայ իրենց առջեւ նոր աշխարհ մը որ կարելի կ'ընծայէ իրենց ազատիլ այդ թաքստարանէն, ահա ժառանգական յատկութիւններն, որք անջնջելի են, իրենց բոլոր յատկութեամբ երեւան կուգան, նման հնութեան այն արձաններու որք դարերէ ի վեր հողի ներքեւ ծածկուած կը պահուէին, եւ երբ բարերապաշտ գիւղուած մը գանձը երեւան կը հանէ, կը փայլին իրենց նախնիներու պայծառութեամբը, երբ հողն ու աղտը, որ կը ծածկէր զիրենք, մաքրուին։

Նրբամիտ էր ու սրամիտ Ներսէսեան, ինչպէս ցոյց կուտան իր մի քանի մասնաւոր նամակներն, որոց մէջ վայելուչ ու ժպտուն հեգնութիւն կ'երեւի. և եթէ գրականութեան մէջ մտնէր, կարծեմ թէ բաւական լաւ քրոնիկագիր մը պիտի կորնար ըլլալ։

Եթէ քրոնիկագիր մը չեղաւ, լաւ խօսող մը եղաւ։ Մի քանի անգամներ առիթ ունեցած եմ իրեն հանդիպելու. գիտէք թէ մեր ընչաւէտ դասին ընկերակցութիւնը ընդհանրապէս ո՛րչափ անտա-

նելի է, խօսակցութիւններն ո՛րչափ անհամ, անխորժ, աստիկ է. ներսէսեան բացառութիւններու մէջն էր, կարելի էր զինքը մոտիկ ընել առանց ճանճրանալու: Խօսակցութեան մէջ «քէ-քէ-է-է» էր, և գուցէ իրաւունք ունենան անոնք, որք կը կարծեն թէ աւելի դժուար է հետեւարար աւելի մեծ արժանիք կայ, «քէ-քէ-է-է» ըլլալ խօսակցութեան մէջ քան գրութեան: Եւ սրամիտ հեղինակ մը կը կարծէ թէ ամէն ոք կրնայ սրամիտ գրութիւններ գրել, բաւական է որ խորհի և կարդայ. — ո՞ գիտէ, գուցէ իրաւունք ունի այդ հեղինակն. ո՞չ ապաքէն Գուրգէն ալ սրամիտ յօդուածներ գրելու փորձն ըրաւ: — Անպատրաստ, ակնթարթի մէջ անդադար ցայտեր արձկել, մտքի մասնաւոր տրամադրութիւն մը ու զարգացում ցոյց կուտայ. ներսէսեանի մահովը մեր ընկերականութիւնը կը կորսնցնէ իր ամէնէն սրամիտ անդամներէն մին:

Եւ ազգն ալ կը կորսնցնէ իր ապագայ գործիչներէն մին: Ներսէսեանն ալ «դէ-մե» մը սկսաւ ըլլալ, կամ ինչպէս կ'ըսեն սովորաբար «դէ-մե» մը, բաւական զոհութենէ վերջ սակայն. բարիգեան երիտասարդի մը համար հրապուրիչ չէր Ղալաթիոյ եկեղեցիի շուրջը դեգերիլ. բայց «դէ-մե»-ին կոչումն ունէր. մօր կողմէ քահանայի թոռ էր: Օր մը Օրթագեղէն քալելով Ղալաթիա կուգայի. եկեղեցիին փողոցը մօտեցած ժամանակս տեսայ ներսէսեանը որ կը մօնէր հոն. բայց խեղճը կարծեմ կ'ամէնար. «քէ-քէ-է-է»-ին օձիքները վեր դարձուցած էր, դէմքը գրեթէ ծածկած, անտես կ'ուզէր մնալ: Տնտեսական խորհուրդի ատենապետ էր և կ'երթար պաշտօնին: Չեմ գիտեր ինչո՞ւ ամէկոտ էր. ո՞չ ապաքէն մեր բոլոր վաճառականները, սեղանաւորները, հարուստներն, ամէնքն ալ «դէ-մե» են:

Եւ յետոյ յառաջացաւ «պարէզ» մէջ. անցեալ տարի երբ պիտի ընտրէինք «պարէզ»-ն Քաղաքական Ժողովը, ներսէս ներսէսեանի անունը ցանկին գլխաւոր անուններէն էր: Գիտէինք իր դադափարները. պահպանողական չէր. ծուրութեան համաձայն էր մեր մէջ. պահպանողական բառը.

մեր մէջ միայն փտած մտքերը ինքզինքնին պահպանողական կ'անուանեն: Կրակոտ, կռուասէր — այսինքն կեանք սիրող — միտք ունէր ներսէս ներսէսեան, կրնար պահպանողական ըլլալ: Գրեթէ միաձայնութեամբ Քաղ. Ժողովի անդամ ընտրուողներէն եղաւ: Այս ընտրութեամբ շատ դժուեցաւ իր անձնասիրութիւնը: Միթէ ամէնէն ազնուական փառասիրութիւնը իր ազգին վստահութիւնը գրաւելու տենչը չէ՞:

Այդ ընտրութենէ յետոյ սկսած էինք շատ յոյսեր տածել իր ազգային գործունէութեանն համար. և սակայն «իր արեւուն ետին մահու ստուեր մը տարածուած էր արդէն. իր կեանքի արեւը մարը մըտնելու մօտ էր»:

Ու այդ մարած արեւին հոգեհանգիստը կատարեցին, դարնան վեցերորդ օրը, մեծ պահքի տխրութեան մէջ, փակեալ խորանին առջեւ:

Ինչո՞ւ փակուած մնաց խորանը. միթէ մեծատունի մը համար բացառութիւն ներելի չէ՞, կը հարցնէին այդ օրուան յուզարկաւորները: Եկեղեցիի օրէնքներն ամէնուն համար են, ըսաւ Տ. Խորէն Պատրիարք, տաճարին մէջ հարուստն ու աղքատն հաւասարապէս Աստուծոյ են. բացառութիւն ոչ մէկուն:

Հաւասարութեան կարօտ սրտերը ծափեցին Պատրիարքի այս որոշումին, այլ միթէ չփափագի՞նք որ գէթ հարուստներն ալ անհաւասարութեան դռն չըլլան: Մի քանի տարի առաջ Օրթագեղ հարուստի մը դադաղին համար բացուեցան խորանին վարագոյրները մեծ պահքին:

Փափագելի չէ՞ որ եկեղեցականներն այդ ծիսական խնդիրները կարգադրեն միանգամ ընդ միշտ իրենց մէջ:

Այդ ծիսական խնդիրներն են որք մեր եկեղեցականները իրարու դէմ գրգռեալ պահելու կոչուած են. և ո՞ գիտէ, ի՞նչ հետեւութիւններ կրնան առաջ գալ ատոնց չկարգադրուելէն տխուր ու հանդիսաւոր վայրկեաններու մէջ: Գրաւոր խնդիրն որ 1888 թուականէն ի վեր կիսովին լուծուած կը մնայ, միթէ չէ՞ր կըրնար անցեալ օր ներսէսեանի մահն ու տխրութիւնը մոռցնել տալ, եթէ երկու

գիպումած, զորս կրնանք անուանել աշխատանքի, բարեբաղնի, խաղաղութիւնը պահպանելու չծառայէին: Նոյն օրը Գատը-գիւղի մէջ ննջեցեալ մը պատճառ կամ լաւ եւս պատրուակ կ'ըլլայ Տ. Մեղիսե-գեկ սրբազանին հետոս մնալ Բերայէն. իսկ Տ. Խորէն (Նար-Պէյ) սրբազան իր հիւանդութեան մահիճէն տակաւին հեռա-նալու վիճակի մէջ չէ:

Այլ դժուար է երեւակայել թէ ի՞նչ կրնար պատահիլ երբ այդ երկու սրբազաններն նոյն օրը գտնուէին Երրորդութեան եկեղեցին և «յանուն սկզբունքի» պահանջէին որ իրենց ալ գաւազան տըրուի. և Պատրիարքն ալ «յանուն սկզբունքի» մերժէր այդ գաւազանի իրաւունքը, զոր այդ օրը Պատրիարքը միայն Հայրիկի տուաւ և ոչ ուրիշի:

Կրնայ լուծուիլ սակայն Գաւազանի այդ խնդիրը: Տարակուսական: Ամէն սերունդ գաւազանի խնդիրն ունեցած է: Նախասահմանադրական է այդ խնդիր, Սահմանադրութեան ժամանակակից, և գոյութիւն ունենայ գուցէ յետ Սահմանադրութեան ալ:

Յիշենք միայն «Ժամանակակից» դէպքեր:

Գէորգ Պատրիարք թոյլատրեց եպիսկոպոսներուն գաւազան կրել եկեղեցիներու մէջ. իրեն պահեց միայն Մայր-եկեղեցին, ուր Պատրիարքը եւեթ պէտք է փառաւորուի: Բայց Երուսաղէմատունը ապստամբեցաւ և յաղթանակեց նոյն իսկ Գէորգ Պատրիարքի: Օր մը պիտի պատարադէր Երուսաղէմի փոխանորդ համբաւաւոր Սահակ վարդապետը. բայց կը տեսնէ թէ գաւազան կրելու իրաւունք չպիտի ունենայ. ինքն ալ խաղ կ'անցնի պատարադելէ, և կարճ կապելու համար կ'երթայ սուրճ մը կը խմէ, ծովը կ'աւրէ. կոխը կ'սկսի Պատրիարքարանի և Երուսաղէմատան միջև: Երուսաղէմատունը կը պնդէ թէ՝ Երուսաղէմի Պատրիարքի փոխանորդն իրաւունք ունի ամէն ատեն գաւազան կրելու, նոյն իսկ երբ վարդապետ է: Գէորգ Պատրիարք որ շատ պարագայներու մէջ իր արիւթիւնը ցոյց տուած էր և օր մը ահեղ պետութեան մը դիմադրելու չափ ոյժ պիտի զգար յանձին,

անձնատուր եղաւ Երուսաղէմատան:

Պօղոս Պատրիարքի օրով գաւազանի խնդիրն անակնկալ կերպով կը ծագի: Գէորգ Պատրիարք կաթողիկոս ընտրուած է և Պօլիս կուգայ Պատուիրակութիւն մը, որուն մէջն է Ջալալեանց Սարգիս Արքեպիսկոպոսը. այդ միջոցին «մեծ» ննջեցեալ մը կը պատահի Օրթագեղ. Ճանիկ Ամիրայի որդի Միրիճան ամիրան կը մեռնի. հանդիսին նախագահը Պօղոս Պատրիարքն է. հոն է Ջալալեանցը: Երբ իրեն գաւազան կուտան, զարմացումով կը հարցնէ.

— Ի՞նչ է աս:

— Գաւազան:

— Գիտեմ. կը տեսնեմ. բայց Պատրիարքի ներկայութեան ես գաւազան առնեմ. Աստուած չընէ:

Միւս եպիսկոպոսները չուարած կը մընան. կ'առնեն Ջալալեանցը կը տանին քահանայներու սենեակը և կ'աղաչեն որ «այդ բանը չընէ». պատճառ պիտի ըլլայ որ այնուհետեւ իրենք ամէնքն ալ գաւազան չկրեն: Սարգիս Արքեպիսկոպոս անդրդուելի կը մնայ:

— Մոկի-Ֆէ Գաւազը բռնած է, կ'ըսեն միւս եպիսկոպոսները:

Ի՞նչ ընեն, էջմիածնէն եկած է, գըլ-խընուն պէս մ'է. անուշ տեղը կապելու է: Խնդիրը շատ պրպտել չըլլար Ուստի ամէնքն ալ լռիկ մնջիկ պարզ աբեղայի պէս գաւազանին ձգած խոնարհաբար կը քալեն:

Բայց կայ համով կէտ մը զոր պէտք չէ առանց յիշելու անցնիլ. Ջալալեանց Արքեպիսկոպոսը շրջապատող խումբին մէջ կար նաեւ երիտասարդ վարդապետ մը, խարտեաշ մաղերով, ալու աչերով, սիրուն, փաղփուն, որ կը ժպտէր միայն առանց կարծիք յայտնելու: Բերայի քարոզիչն էր Խորէն վարդապետ. ապագայ Նար-Պէյ Խորէն Արքեպիսկոպոսը:

Դէպքերու հեզնական զուգադիպութեամբ քառորդ դար մը վերջ, այդ հանգուցեալ Միրիճան ամիրայի դադաղին չուրջն է, դարձեալ Օրթագեղի եկեղեցիի մէջ որ կը ծագի եկեղեցական ուրիշ խնդիր մը, զոր յարուցանողն ալ դարձեալ էջմիածնէն եկած եպիսկոպոս մըն է: Օր-

Թագեղի քարոզիչը Տ. Վահրամ եպիսկոպոս Մանկունի կը մերժէ ընկերանալ Տիւղին Միւնէփէյր Եազըճեանի դադաղին, զի այդ խեղճ կինը անձնասպան եղած էր և անձնասպանութիւնը եկեղեցւոյ համար աններելի մեղք է և առանց մեղմացուցիչ պարագայներու իրաւունքի:

Եւ սակայն այդ մեղմացուցիչ պարագայներու իրաւունքը՝ ճանչցած էր Ս. Պատրիարքն որ արտօնած էր ննջեցեալը Թաղել եկեղեցական արարողութեամբ: Հայրիկ ննջեցեալին գացած էր, իսկ Վահրամ եպիսկոպոս չէր գնացած:

Ո՞վ է մեղաւորը, Հայրիկ թէ Վահրամ եպիսկոպոս: Ոչ ոք: Ս. Էջմիածնի աւանդութիւններու հաւատարիմ է Վահրամ եպիսկոպոս. իր խղճին կը հպատակի. և բազմաթիւ են այն եկեղեցականներն որք հնազանդելով իրենց խղճին չխոնարհին նոյն իսկ ամենամեծ տիտղոսներ ունեցող անձնաւորութիւններու հանդէպ, ինչպէս են տիկին Միւնէփէյր Եազըճեանի ընտանիքն ու ազգականները: Վահրամ եպիսկոպոս անաչառ է, խոտապահանջ. կրնա՞նք մեղադրել զինքն որ իր խղճին մտիկ ըրաւ, և ոչ թէ հրամանի:

Կրնա՞նք մեղադրել Հայրիկն ալ. Հայրիկ չմեղադրուիր. իր անունը իր վրան է. Ժողովուրդի հայր: Օրէնքէ վեր, եկեղեցւոյ աւանդութիւններէ վեր բան մը ունի. սիրտ:

Ո՞ւր կը վերջանայ եպիսկոպոսի մը պարտականութիւնը հնազանդելու նուիրապետական կարգ կանոնի. ո՞ւր կ'սկսի իր անկախութեան և խղճին համեմատ գործելու իրաւունքը:

Կարելի է՞ այդ սահմանները դժեւ մեր եկեղեցիի մէջ, ուր ոչ հրամայողն յայտնի է, ո՞չ հնազանդողը: Ո՞ւր են օրէնքներն. ո՞ւր աւանդապահները: Եւ երբեմն նոյն իսկ շատ բարձրէն չգա՞ր կարգ կանոնի, աւանդութիւններու խանգարումի հրամանը, տա՞նք օրինակ մը վերջին Ժամանակներս սլատահած դէպքի մը: Ինչո՞ւ հրաժարեցաւ Թիֆլիզի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սեդրաքեան: Ինչո՞ւ վասն զի Կաթողիկոսը միջամտեց թեմական առաջնորդի մը իրաւասութեան սահմաններուն մէջ: Մի քանի անձեր քահա-

նայ ձեռնադրելու հրաման տրուած էր էջմիածնէն առ Թիֆլիզի առաջնորդն: Արիստակէս եպիսկոպոս որ գիտէ թէ եկեղեցիի և ազգի բարձրագոյն շահերը կը պաշտպանուին արժանաւոր եկեղեցականներով, իրեն խղճին հակառակ սեպեց ձեռք դնել անարժան մարդերու վրայ: Իր իրաւունքն էր իր թեմին մէջ քահանայ չձեռնադրել անարժանները. այդ իրաւունքը գործադրեց: Բայց երբ Զարին ի Կովկաս այցելութեան առթիւ, Կաթողիկոսը Թիֆլիզ դռնուեցաւ մի քանի եպիսկոպոսներով, հրամայեց անոնցմէ մէկին քահանայ ձեռնադրել Արիստակէս եպիսկոպոսի մերժածներն. հրամանը կարգադրուեցաւ. Արիստակէս եպիսկոպոս վերաւորուած ուրիշ բան չէր կրնար ընել, բայց եթէ քաշուիլ. ու քաշուեցաւ, իրեն հետ տանելով ամբողջ Արարատի ու Կովկասի ցաւն ու վիշտը:

Ո՞վ է մեղաւորը, ո՞վ է յանցաւորն այս խանգարումներու, այս անկարգութիւններու մէջ:

Ի՞նչ ըսենք:— Դիւրին պատասխան մը կայ եկեղեցականներն արդարացնելու: Պաշտօնէին է մեղաւորը:

ՀՐԱԶԴԱՆ

ՄՐԲՈՒՅԻ ՄԱՅՐԱՊԵՏ

Սրբուհի մայրապետ մըն ալ անցեալ օր թաղեցինք Նկիւտարի մէջ: Գալֆայեան Որբանոցի հիմնադիր-մօրը նման, մեծաշուք ու հանդիսաւոր չեղաւ իր թաղումը, այլ հաւատացեալի մը աղօթքին պէս զգուշաւոր: Երկուքն ալ կրօնքի նըւիրուած էակներ, երկուքն ալ իրարու ետեւէ մեկնեցան այս աշխարհէն՝ աւելի լաւագոյն աշխարհ մը գտնելու գերազանց միտքարութեամբ: Կրօնքի սիրոյն մէջ միացած, անոր ըմբռմանը մէջ տարբեր եղան այս երկու մայրապետները. միոյն մոտաւորապէս եղաւ Կրօնքն իր տիրապետող ու գործօն հեղինակութեանը մէջ,

միւսինը՝ կրօնքն իր թաքուն և, եթէ կարելի է այսպէս ըսել, Լեւոնի հրապարակին մէջ. Գալիֆայեան Որբանոցի Հիմնադրին համար, մեծփայելուչ ու լուսայեղց կաթուղիկէն պէտք էր, որպէս զի իր աղօթքը դէպ յերկինս ուղղէր խանդավառ շեշտերով, իսկ Սկիւտարի Սրբուհի Մայրապետին համար՝ մութ ու խոնաւ մատուռը, ուր, պատին տակ կծկտած, իր աղօթքը մրմնջէր արտասուագին:

Եղիա Տէմիրճիպաշեանի մօրաքոյրն էր հանգուցեալ Սրբուհի Մայրապետը: Դեռ աչքիս առջին է անոր երկար ու նիհար հասակը, որ սեւերու մէջ պարփակուած էր միշտ, մանկական փոքրիկ ու անուշ դէմքը, իր մոմի ճերմակութեամբը, եւ կապուտակ մանրիկ աչերն որք հեզութիւն ու միամտութիւն կը պատկերէին յորտաժամ: Ու ամէն անգամ որ զինքը տեսած եմ, Հիւկոյի տողերը միտքս ինկած են. «Ինչ որ նիհարութիւն եղած էր իր երիտասարդութեանը, թափանցկութիւն դարձած էր իր արբունութեանը մէջ. և այդ թափանցկութեան մէջէն հրեշտակը կ'երեւնար: Աւելի՛ հոգի մըն էր այն քան կոյս մը: Իր անձը դուգես ստուերէ շինուած էր. հազիւ հազ պէտք եղածին չափ մարմին, որպէս զի սեռ մը գտնուէր ի նա. քիչ մը նիւթ որ ցուք մը կը բովանդակէր. միշտ վայրանկեալ մեծ աչուրներ. պատրուակ մը որպէս զի հոգի մը մնայ աշխարհիս վրայ:»

Իր հայրն էր Պէշիքթաշի աւագերէց Տ. Յովհաննէս քահանայն: Սուրբ մըն ալ՝ այդ Տ. Յովհաննէսը, Քրիստոնէութեան առաջին դարուց տիպար մը, որ ողբասներուն ու զանգուխտներուն ձեռքէն բռնելով իր սունը կը տանի եղեր կերակրելու. իր տանը մէջ մատուռ մը ունէր այդ քահանայն, երեք սրբազան պատկերներով, որոց առջեւ Սրբուհի Մայրապետ գտած էր իր կրօնական ներշնչումն և տասն երեք տարեկան հասակին մէջ ինքզինք Յիսուսի նուիրելու ուխտն ըրած:

Կրօնքը իր բոլոր կեանքին հաստատուն դադարարն ըրաւ Սրբուհի Մայրապետը, և հանդերձեալ երանութեան արժանանալու փափաքն՝ իր միակ նպատակը: Անոր վեհութեանը տակ ընկճած, յոյս իսկ չունէր թէ օր մը պիտի տրուի իրեն հասնիլ

այդ նպատակին. մեղաւոր կը կարծէր ինքզինքը Սրբուհի Մայրապետը, ինք որուն կեանքը անընդհատ շարք մըն էր եղած բարութեան և առաքինութեան գործերու: Հէ՛գ սուրբ կին. երբ իր ազգուն մարմինը փաթթեցին Երուսաղէմէն հետը բերած պատանքին մէջ, իր հոգին, աշխարհային ամէն կապանքներէ մերկացած, սլացած էր անշուշտ դէպ այն բնագաւառներն յորս հաւատացեալք կը յուսան դրոնել անսահման երանութիւնն ու անվախճան վայելքը:

Այն փոխանցութեան շրջանին մէջ ուր կ'ապրինք, ուղեցի նշանակել անցնիլն այսպիսի դէմքի մը որ իր հետ կը տանի ամբողջ սերնդեան մը ոգին և որ, վաղը, հեռաւոր անցեալի մը մշուշին մէջ անյայտացած պիտի երեւի մեզ: Մանաւանդ զի, այն հոգեբանն որ օր մը ջանայ վերլուծել ժամանակակից հայ գրականութեան ամէնէն հետաքրքրաշարժ դէմքին, Եղիա Տէմիրճիպաշեանի, կեանքն ու գրիչը, պէտք պիտի ունենայ ի հաշիւ առնլու կրօնական միտքիքական աղբեցութիւնն որուն տակ ապրած է միշտ նա մանուկ հասակէն սկսեալ:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ